ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի (ծածկագիրը՝ 61-2.1-5)

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- կրթություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

Գործառույթները՝

- ապահովում է ուսումնական հաստատությունների գործունեության վերահսկողությունը՝ ՀՀ Կրթության և Գիտության նախարարության կողմից հաստատված կարգի համաձայն.
- վերահսկում և ապահովում է պետական հանրակրթական ծրագրերի իրականացման աշխատանքները.
-ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը
- վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան.
-համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններում.
-վերահսկում է մարզպետարանի ենթակայության հանրակրթական ՊՈԱԿ-ներին ներկայացրած տարիֆիկացիոն /վարձաչափային/ մատյանների, տարեկան նախահաշիվների /պետպատվեր և արտաբյուջետային միջոցներ/ և դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրության, վերլուծության և մարզպետի հաստատմանը ներկայացնելու աշխատանքները .
-վերահսկում է հիմնական և միջնակարգ կրթության մասին վկայականների,ատեստատների և դիպլոմների ստացման և բաշխման աշխատանքները.
-նպաստում է մարզի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանը, համագործակցում նրանց մշակութային կենտրոնների հետ.

-վերահսկում է Հանրապետական օլիմպիադայի դպրոցական, տարածքային և մարզային փուլերի անցկացումը.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև
տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկակական միջոցներով աշխատելու ունակություն.

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 31 հուլիսի, 2018թ.
Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերի պատճենները իսկականի հետ միասին.
- դիմում /լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.
- անձնագիր
-դիպլոմ
-աշխատանքային գրքույկ
- արական սեռի անձինք նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին
- մեկ լուսանկար 3x4 սմ. չափսի:
Աշխատավարձը կազմում է 310,858 դրամ (երեք հարյուր տաս հազար ութ հարյուր հիսունութ դրամ):
Տվյալ որոշակի ժամկետով թափուր պաշտոնի վերացման ժամկետը՝ հիմքի վերացումը
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ,ժամը 10:00-ից մինչև 13:00-ն,բացի շաբաթ և կիրակի օրերից:
Հասցեն՝ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4: